

ԽԱԶԻԿ ՄԱԼԻԱՍՅԱՆ

ՀԵԼԼԱԴԱՆ



891.995 -
Մ-15

ՊԵՏՆՐԱՏ 1938 ՅԵՐԵՎԱՆ

ՀԻՍ 20 1
2011-07

ԽԱՁԻԿ ՄԱԼԽԱՍՅԱՆ

891.99ԼԷ
ԼԷ-75
այ.

Հ Ե Լ Լ Ա Դ Ա Ն

ՆԿԱՐՆԵՐԸ

Ե Դ. Ս Ա Ր Գ Ս Յ Ա Ն Ի

Պ Ե Տ Շ Ր Ա Տ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Ց Ե Ր Ե Վ Ա Ն 1939

ՅՕՋԵ
ԲԵ

Х. МАЛХАСЯН
ЕЛЛАДА

Гиз. Арм. ССР, Ереван, 1939



3206
39

Հելլադան պատկանում է Մ... գյուղի կոլտնտեսու-
թյանը: Յերկու տարի առաջ Հելլադան քուռակ էր: Այդ
հասակում նրա խնամքը հանձնեցին կոմլեքիտական Արա-
յին: Վերջինս Հելլադային կերակրում էր, գետում լողաց-
նում, մաքրում:

Կենդանին վաղուց խնամատարին մտերմացել էր: Գա-
լով հեծնելու խնդրին, ձին առաջին անգամ մեջքին ծան-
րություն զգալով, տրինգ-տրինգ արավ, սլացազ արձանե-
րով մեկ:

Արան ընկճվող չէր: Նա համբերությամբ Հելլադայի
գժությունները տարավ: Վերջում հաղթանակեց: Հելլադան
ընտելացավ:

Նրանք շատ մտերմացան:

Ձիավարժը Հելլադայի հետ մեկտեղ պահեց գերմա-
նական ցեղի մի շուն՝ անունը Տիբո: Տիբոն պատկանում
էր Արտեմին, Արայի լեղրորը:

Արտեմն աշխատում էր Ղրիմում: Նա կապի վաշտում
հրամանատարի պաշտոն էր վարում:

Այդ շունը կապի վաշտում հաճախել էր շնավարժա-
կան ուսումնարան: Այդտեղ Տիբոն սովորել էր ամեն հա-
վանական ձախորդություններից բարեկամներին ազատել:
Վարժվել էր թշնամիներից գենքեր հափշտակել: Սքան-
չելի լիբ գերիների կապտած ձեռքերն ազատելու գործում:
Նա կապերը ատամներով ծամում էր, կտրտում: Քաջ էր
նամակատարության մեջ: Տիբոն կարող էր թշնամուն
խուզարկել, անակնկալի բերել և զինութափել: Սովորել էր

սահմանապահութիւն, սանիտարական ոգնութիւն և ուրիշ շատ բաներ:

Արձակուրդին Արտեմը յեկավ ծնողների մոտ: Տիբոն նրա հետ եր: Արան ու կենդանին բարեկամացան: Նա յեղբորը խնդրեց, վոր Տիբոյին իրեն նվիրի: Արտեմը գիշեց:

Տղաների հետ յերբեմն խաղում էին «Կազակի» ոսպմիկ խաղը: Արան հաճախակի գերվում եր: Նրա ձեռք ու վոտը կապում էին, պցում փոսի մեջ: Տիբոն ծածուկ Արայի ձեռքի կապերը ծամում, կտրտում եր:

Տիբոն զարմանալի հոտառու յեր: Յերբեմն Արան գնում եր անտառ, մորի հավաքելու: Կենդանին նրա հեռքերով գալիս եր, տիրոջը գտնում: Ամենից արտասովորը պատահեց ամառային մի որ: Գիշերն Արան վոտով ուղեվորվեց քաղաք: Նա կտրեց ուղիղ 38 կիլոմետր: Հաջորդ որվա իրիկնամուտին դուռը չանկուտեցին: Արան դռան փեղկը բացեց, Տիբոն եր, Սատանա: Հետքերով յեկել եր:

Տիբոն բարեկամացավ և Հելլադայի հետ: Արան քանի անգամ հուզմունքով տեսել եր, թե ինչպես շնիկն իջ դունչը հասցրել է Հելլադայի դնչին, լիզում ե: Նժույզն ուրախութիւնից ուռնգերը բացում ե, խրխնջում, բաշք տարածած արշավում հանդով:

* * *

Սեպտեմբերի 28-ին, բերքի տոնի առթիվ, նշանակված եր ձիարշավ: Ծ... գյուղակից պիտի մասնակցեր Հելլադան: Արշավի վայրը մեծ հարթավայրն եր:

Արան նշանակված եր Հելլադայի հեծվոր:

Կոլեկտիվի ձիերը կալում աշխատում էին: Միայն Հելլադան ազատ եր: Արան ամեն առավոտ նրան արձակում եր արոտները, իրիկնագեմին վերադարձնում գոմ:

* * *

Մաքրավանքից իրենց գյուղն եր դառնում Տիտոս պապը: Քայլում եր և հոնի ձեռնափայտը համաչափորեն խփում գետին: Նրա դիմաց տարածված եր կոլտնտեսութեան արտը: Գյուտ անող մարդու նման Տիտոս պապը ժպտում եր: Առաջներում այստեղ փոքրիկ արտեր էյին, իրարից բաժանվում էին միջնակներով, իսկ հիմա չքացել են այդ բոլոր միջնակները և ձգվում ե անծայրածիր արտը:

Տիտոս պապը խորիմաստ կերպով գլուխն որորեց.

— Աշխարհի բանը դու տես ե... Ինչե՞ր կատարվեցին...

Հնձած արտի մեջտեղում կար մի բավական ընդարձակ տարածութիւն: Յերեվում եր, վոր նախքան հնձելը, հասած հասկերը հրդեհել էյին, բայց շուտով այդ հրդեհը հանգցրել էյին, վորովհետև արտն ամբողջովին հրդեհված չեր: Հրդեհի վայրում դեռևս թափթփված էյին սև մոխիր դարձած հասկերի արմատներն ու գլուխները:

— Շան վորդի շներ... մարդկանց արյունը խման բոլ չելավ, հիմա ել արտերին կպան...

Գործին տեղյակ մարդն անմիջապես կհասկանար, վոր Տիտոս պապը խոսում եր կուլակաթափ արված և բանդիտ դարձած Լազոյի ու նրա կաթնեղբայր Շավասալի մասին:

Առաջներում, թագավորի ժամանակ Լազոյին ասում էյին «յոթը գյուղերի զահրնկեց արքա»: Նա յոթը գյուղերի վաշխառու յեր, յոթը գյուղերի ամենահարուստ մարդը: Բացի այդ, մի կաշվի գործարան ուներ, խանութ ուներ, առևտրական գործեր ուներ: Իսկ Շավասալ Բայրամը ցարական սպա յեր, վորը քաղաքացիական կռիվներից հետո, վորպեսզի իր դիմակը չպատովի, հեռու տեղերից յեկել եր Ծ... գյուղը, փոխել եր անունը, ազգանունը և դարձել եր գյուղխորհրդի քարտուղար:

Կոլեկտիվացման ժամանակ սկսեցին վնասարարութիւն անել, բայց հենց վոր տեսան իրենց կեղտոտ գոր-

ծերը բացվում են, փախան սարերը: Այնտեղից ել նրանք
դարձյալ շարունակում եյին իրենց կեղտոտ գործերը:

Այն հրդեհված արտը, վորին հանդիպեց Տիտոս պա-
պը, դարձյալ նրանց ձեռքի գործն էր:

Ահա թե ում մասին էր խոսում Տիտոս պապը:

Տիտոս պապը Լազոյին լավ էր ճանաչում: Թագավո-
րի ժամանակ նրա մոտ սայլապան էր յեղել:

Հանկարծ ճանապարհին ձիու դոփյուն լավեց:

Չին կրակ կտրած վագում էր: Անընդհատ լավում էր
հեծյալի մտրակի շխկոցն ողում:

— Ես մեր Հելլադան ա, տո... Վրան էլ Լազոն...

* * *

Հենց այդ որն էլ Մ... գյուղակի հանդերում Արան Հելլա-
դային շատ վորոնեց: Անցավ սարալանջերով, քայլեց ան-
դընդախոր ձորերում, բարձրացավ դիմացի բլրի կատարը:

Անհավատալի խաղաղությամբ մուժը փովում էր: Յերկնակամարում ահաշունչ գոռոցներով ամպակույտերը
միմյանց ճնշում եյին: Յերախաբաց ձորերում նիրհելով
սողում էր թանձր մառախուղը:


Լեռնաշարքերից այս կողմ տարածվում էր ընդարձակ
հարթավայրը: Այնտեղ վորովում էր Զանգուն:

Հելլադան չկար:

Արան գայրույթից շրթունքները կծոտում էր: Նա
յերկար վորոնումներ կատարելուց հոգնել էր, աչքերը
գոցվում եյին: Շրջապատը նորից դննեց, իջավ դետափ-
Յերեսնիվայր պառկեց, դեմքը թագցրեց բազուկների մեջ:
Կանաչը քսվում էր այտերին:

Տիրոն յեկավ: Նա վարանոտ մոտեցավ, տիրոջ ձեռ-
քերը լիզեց:

— Տիրո, անուշ ջան, մոտ արի. — ասաց ու շանը սեղ-
մեց կրծքին. — քաղցրիկս, Հելլադան չկա, մանեման յեկա
սարերում, են հեռավոր անտառում: Չկա:



Տիբոն հոտոտեց ողբ, կանաչը և քայլեց: Նա դուռնչն ուղղեց դեպի Ալիբեկի փեշերը, դարձավ Արային: Տիբոն հաջեց, Արան մտածմունքից սթափվեց:

— Հելլազան եդ կոզմն ե, հմ: Գտիր նրան, ջանա:

Հանկարծ թակ-թուկ-թակ-թուկ, փոշոտ սալուղիով ընթանում եր Տիտոս պապը: Նա քայլում եր, հոնի ձեռնափայտը գեանին զարկելով:

— Բարե, Տիտոս պապ:

— Աստծու բարին, բալիկ ջան, ի՞նչ կա:

— Հելլազան կորել ե, շատ ման լեկա: Չկա:

Ծերունու դեմքով մի մուկ ստվեր անցավ: Կնճիռները խորացան:

— Տարավ, բալիկ ջան, շուն Լազոն տարավ:

— Եդ վոնց...

Տիտոս պապն արխալուղի գրպանից քաշեց թուփունի ծալքավոր քիսան, փաթաթեց մի ծխախոտ, վառեց ու պատմեց, ինչ վոր ճանապարհին իր հետ պատահել եր:

— Պապ, վո՞ր կողմը թոան:

— Ալիբեկի, անուշ ջան.— սաց ձերունին ու առաջ անցավ:

Տիբոն անցնում եր հեովի քարակույտերի վրայով: Եռտով ընկավ սայլուղին, շեղակի կտրեց, բարձրացավ մի փոքրիկ հողաթուժք:

Այտեղ փխրուն սևահողի մեջ դրոշմված եր ձիու պատանշանը: Տիբոն լերկնր-լերկնր հաջեց:

Արան սթափվեց, զայրացավ իր թուլության վրա: Բահ, աչքերը թացանում են: Չիու համար աչքերը լվանալ: Յերեխա: Բայց ի՞նչ անել...

Նրա հիշողության մեջ վերապատկերվեցին արկածային վեպերն ու պատմությունները, նրանց եջերում ապրող արխասիրտ հերոսները:

Անհետացած Հելլազային Արան պսակեց ցնորքներով:

Ահա նա, «յոթ գյուղերի գահընկեց արքան»,— Լազոն: Ահա նախկին ոտմիտոր Շավասպը... Կրակոցներ են, կոխվե, մուկ ձորակներ են, կոտրված լեռներ... Արան հրաշքով Հելլազային ազատել ե, ձողալրում ե ախոյաններից...

Հանկարծ կայծակը շրխեաց: Անձրևը խշխշաց: Արան տեղից թռավ:

— Տիբո, Տիբո.— կանչեց ու սլացավ

Տիբոն հետևեց նրան:

Արան հասավ տուն: Երբերից անձրեվաջուրը շոշրոտում եր:

Հայրը, անտառապահ Թորոսը, թափառումներից վերադարձել եր ու քնել:

Գիշեր եր:

Լուսադեմին Արան արթնացավ սովորականից վաղ: Մայրն ասաց, վոր ամուսինը շամանդաղին մեկնել ե Ուրախության սարավանդը, վորսի:

— Տիբոյին տարել ե,— հարցրեց Արան:

— Տարել ե,— պատասխանեց մայրը:

Արան շտապ թեյ խմեց: Մորն ասաց, թե տղաների հետ գնում ե անտառ մի քիչ շրջելու:

Քաթանի տոպրակը լցրեց հաց ու պանրով և տանից դուրս գնաց:

Ձգում եր, վոր ձեռնարկում ե մի տարրինակ գործի:

Տիբոյի բացակայությունն անախորժ եր: Կենդանին իր հոտառությամբ ու բնազդով թերևս ոգներ իրեն: Հայրը կվերադառնար գիշերը, սպասեր Տիբոյին, ստիպված կլինեի վորոնումները հետաձգել: Համբերել անկարող եր:

Ավագակը Հելլազային թոցրել ե ով գիտի ինչ սար ու ձորով: Կտրել ե ով գիտի քանի արահետ ու ճանապարհ:

Յեվ Արան հաստատ վորոշեց Հելլազային գտնել:

Ահա և անտառի կեսորը: Աշնանային տապ ու կծու արեփ: Թ՛վում եր, թե կյանքը մեռել է: Լուսթյուն:

Լսվեց չոր տերեփների խշրտոց: Անտառում յերևաց Արան: Թողնում եր հուսալքված մարդու տպավորություն: Փնտռում եր ինչ վոր բան: Վորոնածը գտավ՝ խաշամով պարուրված շավիղ եր: Այս ճանապարհով նա առաջ անցավ:

Արան իջավ մի գոգավոր փոս: Նրա դեմը բարձրացան մի զուլփ քարաժայռ: Նրանց տակից մի զուլալ աղբյուր եր ցայտում:

Աղբյուրի մոտ Արան ուսից վերցրեց քաթանն տոպրակը, չոքեց միմյանց մոտ շարված սալաքարերին: Ագահությամբ շուր խմեց: Հետո զով տեղ վորոնեց:

Արան տեղավորվեց աղբյուրի յեզրին, ավելուկների մեջ: Հանեց լավաշների փաթեթը, թրջեց, դրեց գետնին փռած տոպրակին: Ախորժակով պանրի հետ սկսեց ուտել:

Իմացի բարձունքից դանդաղ իջնում էին յերկու ձիավոր: Ձիերից առաջինը սև եր, մյուսը՝ սիպտակ:

Բարձունքը հեռու յեր: Նրա գագաթն ողակված եր քարաժայռերի շղթայով, իսկ փեշերը պատում եր խիտ անտառը:

Սև ձի, մանրիկ ու թեթև քայլք... Նա յե... Արան վազում եր ու վազում: Ծառերի սաղարթը զարնվում եր նրա այտերին, ձեռքերին ու ականջներին:

Նրա հայացքը կախարդված եր բլրով: Շուտով ընկավ անտառի խորքը: Սաղարթի խտությունից արևի լույսն այտեղ ճանապարհ չունեց: Շրջապատը համակված եր սառնաշունչ կիսամութով:

Բարձունքն Արաչի աչքերից անհետացավ: Վազքի արագությունը կրկնապատեց: Բայց... Դժմխք ու պարսափ... Գահավիժվեց փոսի մեջ: Աղվեսների թակարդ եր, ծածկված մանրիկ ճյուղերով ու չոր խոտով: Փոսից հազիվ դուրս յեկավ:

Վերջապես, ահա բարձունքը: Արան շուրջը դիտում եր: Ձիավորներն անհետացել էին: Արան տեղից կտրվեց, անցավ բլրափեշի ձախ թևին ծավալված անտառով: Ձիերի վայրեջքն ուղղված եր այդ կողմը:

Շատ վազեց: Վայրի սալորենին ձեռքը պատեց. վերքը վողողվեց արյունով: Վոտերի ուժը հատավ, սրունքների մեջ կարծես շիկացած շյուղեր խրեցին: Մի փոքրիկ բացուտում նա փովեց գետնին:

Արևը խայթում եր: Թուխ ամպերը թանձրանում ելին, հարավից սահում հյուսիս:

Չորակի մամռակալված առվում գորտերը զրուցում էին: Նրանց ձայնի մեջ անմեկին տագնապ կար: Ակնեքեվ եր, վոր անձրեվ պիտի գար:

Արան քնեց: Արևը շղարշվեց ամպերով: Անտառն ահարկու շառաչեց: Անցան ժամեր: Քամին կատաղեց:

Անտառը խրախճանքի մեջ եր: Արան խաղաղ քնած եր: Շրթունքների բացվածքից նկատվում եր ատամնաշարքը, շուշանի պես ճերմակ:

Յերկնակամարում ամպակույտեքը միմյանց ճնշում էին: Չայրույթից նրանք խեղդում էին սարերի կատարները, գալարվում:

Հեռուներում բռնկվեցին կայծակներ: Նրանց վոսկեղեն թրերը շողշողացին, ապա մարեցին:

Հանկարծ անտառի գլխավերեվում շառաչեց մի նոր կայծակ: Վորոտը յերկնակամարի կուրծքը կարծես ձեղքեց:

Արան անձրևից սթափվեց: Այստեղ ինչ գործ ունի, անտառի խորքում, անձրևոտ յեղանակին: Հետո գիտակցությունը զուլալվեց, հիշեց, թե ինչպես է ընկել այստեղ:

Արան անցավ յերկու սարավանդ և մի ընդարձակ բացուտ: Նա արահետով մագլցեց դիմացի բլրի կատարը: Անձրևից հողն ու կանաչը դարձել էին վողորկ: Վոտերը հա-

ճախ սայթաքում էյին: Վերջապես հասավ բարձունքին: Քարաժայռերի կույտերը, ասես աժդահա ուռմբեր, դարսված էյին միմյանց վրա: Մեջընդմեջ աճել էյին մասրենիները և այլուճի մացառներ:

Սալաքարերի մեջտեղում թառել էր Սուրբ Ավոյի հովիվը: Ասում են Սուրբ Ավոն յեղել է մի շերմեռանդ ճգնավոր: Յերիտասարդութունից մինչև ծերութուն, մինչև մահ ճգնել է այդ քարակոփ շինվածքում: Հովիվը փորված էր մի աժդահա քարաժայռի մեջ:

Հնազեանների կարծիքով այդ շենքը կառուցել են հայ պայազատները: Դուրս են յեկել փորսի, վատ յեղանակներին պատսպարվել են այդտեղ: Դրա պատմութունը շատ հին է:

Արան հովիվի կիսաշարդ դռնակը հրեց, ցատկեց ներս: Դա մի ընդարձակ տուն էր, պատերը քար, առաստաղը քար, հատակը քար: Բոլորը հղկված, բոլորը վողորի: Յուրաքանչյուր պատի մեջտեղում բացված էր մի լուսանցք: Նրանցից մեկի տակ փորված էր բուխարիկը՝ պալտաձև, գեղեցիկ:

Հովիվի հատակին թափթփված էր անտառի չոր ու դեղնած խոտ, ցրված էյին կոճղեր, ծառերի չոր ճյուղեր:

Արան նստեց կոճղերից մեկին: Նորից կայծակը փայլատակեց: Առաստաղի անցքից խշշոցով խոտի վրա շարվում էյին անձրևակաթիլները: Նա տխուր խորհում էր:

Մութը շատ թանձրացավ:

Դրսից վտանաձայներ լսվեցին: Հովիվի դռնակը բացվեց: Արան սարսուռեց:

Յափուռնիների մեջ փաթաթված ներս մտան յերկու հոգի: Յուրաքանչյուրն ուսել էր մի հրացան: Նրանք քաշում էյին ձիերի սանձերից:

Արան գլխի ընկավ. առաջինը Լազոն էր: Հաջորդին նա շուտ ճանաչեց. Շավասպն էր:

Շավասպը խուրջինից մի կտոր մոմ հանեց ու վառեց:

— Պահճ, ես վճրտեղից, տղա, յերկնքից իջար.— զարմանքով հարցրեց Լազոն:

Արային քրտինք պատեց:

— Մոտիկ գյուղից եմ գալիս, ճանապարհին անձրևը խշշաց, պահվեցի այստեղ:

Հելլադան Արային նկատեց: Նրա խրխիջից բնակարանը դողաց:

— Զան, ջան.— գոչեց Լազոն:

Հելլադան ուրախ դոփում էր, սանձը քաշկոտում: Բուրովին սև, բարակիրան նժույգ էր, ուներ նեղ ու պինդ սրունքներ, հանգույցավոր պոչ:

Լազոն ձիերին կապեց պատի ճեղքվածքում մեխված յերկաթե գույգ կեռերին: Ըստ յերեվույթին հովիվի քունջ ու պուճախին քաջ ծանոթ էր, փտած խոտի տակից դուրս քաշեց թարմ կանաչի կույտեր, լցրեց ձիերի առաջ: Սպիտակ ձին սկսեց ախորժակով ուտել: Նախկին ռոտմիստը նրանց մեջքերը թամբերից ազատեց: Հելլադան խելացի հայացքով Արային դիտում էր, թառանչում:

— Տղա, վճրտեղացի յես.— հարցրեց Լազոն:

Արան պատասխանեց.

— Ես ձիուն կճանաչես,— Լազոն ցուցածատն ուղղեց Հելլադային:

— Հա, անունը Հելլադա յես,— ասաց Արան:

— Ի՞նչ, Հավլաբար,— զարմացավ Լազոն:

Նա հագի յափնջին հանեց, փռեց հատակին:

— Յերեկ կեսուրին թոցրեցի, կերթաս գեղի կոլխոզահաններին կասես, փոր ման չգան, զուր տեղը նեղութուն չքաշեն, ձին ինձ մոտ ա...

Նախկին ռոտմիստը պառկել էր յափնջու վրա, թիկնել մի կոճղի՝ ծխում էր:

— Շավասպ ախպեր— ձայնեց Լազոն— կրակ չանենք... Լակոտ ջան, տեղիցդ թոփ, ես փետի կտորտանքը, ես խառախուռեքը հավաքի, լից բուխարիին ու կրակը տուր... Առ սպիչկա...

Քիչ հետո Արայի վառած կրակն աղմկում եր:

Շուտով Շավասան ու Լազոն ընթրեցին: Նրանց ընթրիքը բաղկացած էր հացից ու չորացած պանրի մի մեծ կտորից:

Լազոն Արայի ուսից կախված քաթանի տոպրակը նկատեց:

— Տղա, տոպրակդ մի դեսը տուր, տեսնենք ի՞նչ ունես:

Յեվ իհարկե տոպրակը դատարկեց:

Քիչ հետո խուրջիները մեկի միջից Լազոն հանեց գինու մի կիսատ շիշ: Շուտով այդ շիշը նախկին ոռոտիստրի հետ դատարկեցին ու նորից տեղավորեցին խուրջինի մեջ: Լռություն:

— Այ շան տղա, տեսնում ես, ծվարել ենք ես սաքսանի պուճակը, մեր կուլ տվածը շան լակից վատ ե... Ախր հանուն ինչի, հա... Յոթը գյուղ բռանս մեջ դողում եր, առաջս կանգնող մարդու վտաններն ահից ծավում ելին, մարդ էյի, մարդ... Որական յես ասեմ հարյուր, դու ասա հազար մարդ տանս փշրանքներով կերակրվում էյին: Մարդիկ անունս արտասանում էյին ակնածանքով, աղոթում էյին ամենագորին իմ յերկար կյանքի համար: Մարդ էյի, մարդ: Այ, ես ել Շավասպ Բայրամն ա, ինչ զորական եր, գիտես, կովի ժամանակ նեմեցներին մատների վրա խաղացնում եր... Մեր կյանքը պղտորեցին կուսակցականները: Նրանց մեկ-մեկ թրխկացնելու յենք: Լսեցի՞ր շրջործկոմի նախագահի սպանության մասին: Ավտոյով թռչում եր, առաջը կտրեցինք, մատուցերի փողը դրեցի ձակատին և թրանխկ... Թավավեց, մրմնջաց ու մեռավ...

Նախկին ոռոտիստրը լռեցյայն ընթրում եր:

Ընթրիքը վերջացավ: Արայի աչքերն հանդիպեցին Շավասպի թունոտ հայացքին:

— Իկի ճուտ, քեզ պետք է կապել, թե չե գիշերն

ես բնից կպրծնես դուրս, մեզ կձգես թալակը, — ասաց Լազոն և խուրջիներից մեկի միջից հանեց պարանի մի կտոր: Նա մոտեցավ Արային:

Քիչ հետո Արայի ձեռք ու վոտքը ամուր կապկպված եր:

Լազոն փաթաթվեց յափուռնջու մեջ և ձգվեց Շավասպի կողքին, ապա տեղից յելավ, հրազեններն ամուր գրկեց ու նորից շուրջվեց գետնին: Հելլագային փրկելու հույսերը մարեցին: Արային ծանր թախիժ պաշարեց:

Անձրեն արդեն դադարել էր: Լուսնի ճերմակ լույսը հուրիկի հերթիկից և լուսանցքներից ներս եր թափվում:

Անտառը խուլ աղմկում եր: Դրսում արշավում եր քամին:

Նախկին ոռոտիստրն ու Լազոն տարվել էյին խորը քնով:

Արայի աչքերից քունը փախել էր:

— Հիմա տնեցիք ինձ ման են գալիս... խսկ առավոտյան ձիարշավ ե...

Նրա հայացքն առավ Լազոյին: Նա պառկել էր ուղիղ մեջքի վրա, բեխերը շաղախվել էյին բուխարիկում թարթվող կրակի հրով: Նրանք խորհրդավոր տեսք էյին ստացել:

— Ախ, թե ճար լինեք վոնց կպոկեյի եզ կեղտոտ պոչերը, — մրմնջաց Արան:

Տնակի դուռը շանկոեցին:

Անտառի խորքում ծվաց գիշերահավն ու լռեց: Չանկոոցի ձայները դադարեցին: Քիչ հետո կտուրից քստքըստոց լավեց:

Արան գլուխը վեր քաշեց, առաստաղի անցքից կախված եր մի կլոր առարկա:

— Տիբո. — կամացուկ կանչեց Արան ու սարսուռով շուրջը դիտեց:

Չգարթնեցին: Չե, քնած են...

Լսվեց թեթև թրմփոց: Առաստաղը ցածր երևաւ և անվրտանգ: Տիբոն հերթիկից ներս թռաւ: Արան նորից նայեց շուրջը:

Զգարթնեցին: Չե, քնած են...

— Տիբո, անուշիկս, անգինս, քաղցրիկս, ազատիր ձեռքերս, — մրմնջաց Արան:

Կենդանին սաստիկ հեղում եր: Նա փաղաքշանքով տիրոջ ձեռքերը լիզեց:

Տիբոն սկսեց պարանն ատամներով ծամծամել ու կտրրտել:

Քիչ հետո Արան ազատ եր: Նա առաջացավ դեպի Հելլադան:

— Տիբո, սո՛ւս:

Անտառում հողմը սուլում եր: Ծառերը հոգնած հետում եյին:

Լիալուսինը նմանվում եր հրդեհվող կղզու, ցոլում եր շքեղ:

Արան Հելլադային խթանում եր: Սլանում եյին: Նրանց հետևում եր Տիբոն: Սայլուղին վոլոր-մոլոր ձգվում եր առաջ: Տեղ-տեղ հանդիպում եյին ձագարաձև խոռոչներ, պղտոր անձրեկաշրով լցված:

Ծառերից կաթկթում եյին անձրեկակաթիլները:

Յերկինքը գարմանալի ջինջ եր: Սպիտակ ամպեր կային, սահում եյին դանդաղ ու համբընթաց: Նրանք նուրբ եյին, կարծես լուսնի շողերից հյուսված կերպաններ լինեյին:

Շուտով հասան այնտեղ, ուր ճանապարհը բաժանվում եր յերկու մասի: Առաջինը տանում եր դեպի շրջանային կենտրոնը, մյուսը՝ Ծ... գյուղը:

— Վճր ճանապարհն ընտրեմ, — մտածում եր Արան: — Սլանամ գյուղ, իմաց տամ նրանց մատին, արշափից կուշա-

նամ... Թուշեմ կենտրոն... Ախար մինչև հասնեմ այնտեղ, լույսը կբացվի, եղ անիծվածներն ել կարթնանան ու կչվեն... Ինչպես անել...

Այդ պահին Տիբոն կլանչեց: Անտառը զրնգաց: Կենդանին դուռնը պարզեց վեր, հոտոտեց: Ի՞նչ, չգիտես, գուցե նապաստակի հոտ առաւ:

Արան ձեռքը տարավ դրպանը, դուրս քաշեց մի խուսնացած բլուկնոտ ու մատիտ: Թղթի ճակատին գրեց.

«Փյուղխորհրդինախազան Աբեթյանին...»: Հետո շարեց ելի մի քանի տող: Թուղթը քառակուսի ծալեց:

— Տիբո, անուշիկս, վերցրու ես, մի շնչով թռիք տուն, ումը կպատահես տուր նրան, դե, թռիր...

Շունը թուղթը բերանն առավ, մոռաց, պոչը թափահարեց, թռաւ:

3206
39

Քիչ հետո անտառը նրան կլանեց:

Այդ տարի շրջանը բերքահավաքը կատարել եր շատ հաջող և ժամանակից շուտ: Մի խոսքով պլանները գերակատարել եր:

Բերքահավաքը հաջող ավարտելու առթիվ շրջկենտրոնում սեպտեմբերի 28-ին բերքի տոն եր կազմակերպվել:

Միաժամանակ այդ որը լինելու յեր նաև ձիարշափ: Մրցելու եյին շրջանի կուլտնտեսությունների ձիերը: Շրջանային մրցման առաջավորները պետք ե հետագայում մասնակցեյին հանրապետական ձիարշափին:

Բերքի տոնի որը լավ արև արեց: Արևի լույսը փողոցներում շողաց թե չե, սկսեցին քաղաքի հրապարակը հոսել գյուղերից ու ավաններից յեկած կուլտնտեսականները:

Ինչպես բոլոր հանդիսավոր որերին, այնպես ել այդ որը, մարդկանց հայացքներից կարելի յեր գուշակել նրանց արտակարգ ուրախ տրամադրության մասին:



Մարդիկ հագել էյին իրենց տոնական որվա հագուստները:

Ահա Տիտոս պապը: Նրա անցյալ կյանքի չքավորութեան մասին շատ բաներ են պատմում: Ասում են մարդավարի շոր չեր հագնում, մեշուկը ծակում եր, մանուած մեջը: Նրա ընտանիքը տոն որերին չորթնե սպաս եր ուտում:

Իսկ այժմ նա սափրվել եր, յերկարաճիտ կոշիկներ եր հագել: Հագին անցյալ տարի Յերեվանից գնած կոստյումն եր, վրան ել բոլորովին նոր քուրքը:

Իրենց կոլտնտեսութիւնում նա կարտոֆիլը մշակել ե բոլորովին նոր ձևով, ստացել ե շտեմնված բերք: Բերքի տոնի ցուցահանդեսում կային նրա մշակած կարտոֆիլի նմուշները:

Իսկ հրապարակում, դիկտից կառուցված ծածկոցներում խնամքով շարված են ցուցահանդեսի եքսպոնատները:

Տիտոս պապը գլխին ե հավաքել մի խումբ մարդկանց ե արդեն տասերորդ անգամ պատմում ե կարտոֆիլ մշակելու իր նոր ձևի մասին:

Մի ուրիշ գյուղի կոլտնտեսականներ իրենց գլխի շուրջն են հավաքել իրենց հարեան գյուղերի կոլտնտեսականներին: Ասակեպատ արկղերի մեջ լցված են նրանց մշակած ցորենի նոր տեսակները:

Առանձին-առանձին ցանկապատերի մեջ էյին առնված կոլտնտեսականների խնամած անասունները, կով, յեզ, ցուլ, վոշխար, այծ, խոզ ե այլն:

Ինքնագոծ փայլում էյին ուժեղ, մկանուտ ցուլերի ե յեզների աչքերը: Կովերը հեղութեամբ նայում էյին իրենց դիտող ամբոխին: Յերբեմն խանչում էյին խոզերը ե մրկըկում էյին այծերը: Ամենից խաղաղը չաղ, գանգրահեր վոշխարներն էյին:

Առանձին բաժնում պատերի վրա փակցրած էյին շըր-

ջանի լավագույն աշխատող կոլտնտեսականների նկարները:

Մե Քարեցի կոլտնտեսուհի Միմիգարը, նայում եր իր նկարին, նայում ե մի քիչ ել ամաչում: Իր նկարն ե, բայց ինքը կարծես բոլորից շատ ե նայում: Կողքի մարդիկն ել, յերևի, այդ նկատում են:

Շրջանում հայտնի կթվորուհի յե նա:

Տիտոս պապն ել ամենայն համարձակութեամբ կտրել ե իր նկարի առաջը.

— Հրամանքդ, ժողովուրդ, ես իմ, այսինքնստ անարժանիս պատկերքն ա... Ե՛խ, մարդ արարած, սփաթիղ գարուն ա իջել...

Ամպերը ծծմբի գույն էյին առել: Արշալույսը պայծառ բոցավառվում եր: Շրջանային կենտրոնի փողոցներով սլանում եր Հելլադան: Հեծյալի դեմքն ինքնաբավականութիւնից փայլում եր:

Ձիալսը քաղաքից դուրս յեկավ: Նա ընկավ հանդամիջյան ճանապարհը: Չորս դին տարածվում էյին հնձված արտեր: Քարքարոտ միջնակների վրա արածում էյին մի քանի յերինջ, հորթուկներ ե մի չաղ մատակ ձի:

Արան կանգ առավ մի ընդարձակ հրապարակի մոտ: Հետաքրքրութիւնից դրդված, հեռու-մոտիկ ավաններից այնտեղ էյին յեկել տղամարդիկ, կանայք, պատանիներ: Շուտով կսկսվեր ձիարշավը: Հանդիսատեսներից վոմանք շրջափակել էյին արշավին մասնակցող յերիվարներին, գովաբանում կամ նշավակում էյին այս կամ այն ձիուն, յենթադրում էյին թե դրանցից վորը կհաղթանակի, գրաղ էյին գալիս, խիստ վիճաբանում:

Ձիերի սանձերից բռնած, իրար մոտ շարվել էյին հեծյալները:

Հանդիսատեսներից վոմանք աշխատում էյին նրանց հետ զրուցել:

Հրապարակի մոտ Արան ձիուց իջավ:

Բազմությունը նրան շրջապատեց:

— Այ, ինչ քյահլան ձի յե, զտած վոսկի, սա կհաղթի,— կանխորոշեց մի գեղեցիկ յերիտասարդ:

Համախմբվածներն սկսեցին խոսքերի կարկուտ տեղար:

— Հեծյալը պստիկ է, ձին դրան տակովը կանի:

— Տղա, վնդաբեղացի յես...

— Վաճա, Արա — վնդաբեղից-վոստեղ, մեջ ընկավ Տիտոս պապը, — անուշ շան, եղ ի՞նչ հնարքով:

— Տիտոս պապ, պատմությունը յերկար է, ձմռան գիշերին հարմար, հետո կպատմեմ, — ձեռքը թափահարելով ասաց Արան ու Հելլադայի կողը շփեց:

Հանկարծ տագնապ առաջացավ և ողբ ձեղքելով ամենուրեք տարածվեց.

— Պատրաստվել արշավի:

Արան Հելլադայի դունչը շոյեց:

— Անուշիկս, հոգնած ես, մրցելու ուժ ունե՞ս:

Յերիվարը հարուստ բաշը թափ տվեց, փոնչաց:

Պատասխանը դրական էր:

Տասներկու շրուտ ձի մեծ վարզով առաջանում էին: Այնտեղ, ուր Մեծ սարի փեղերը մերվում են Սիզան հարթավայրի հետ, կա մի ասֆալտած խճուղի: Այստեղով անցնում էին մրցակիցները, ձիերին թեթև խթանելով:

Ճանապարհի յեզրերին հանդիպում էին կարմիր դրոշակավոր պահուորդներ: Հարթավայրում շարված մասրենիների վրա աղմկում էին թռչունները: Մոտակա սարերի ժայռապատ կատարները փալլփլում էին:

Հեծյալները գեռ ձիերի ուժը խնայում էին, սպասում էին վերջին ու վճռական պահին: Առայժմ նրանք ուրախ կատակում էին:

— Ե՛յ, ախպերացու, քո ձին քոստի մեկն է, կասես հենց նոր գերեզմանից ա դուրս յեկել: Մեղք ա, մեղք, մի չարչարի՛ր, տար, կապի գոմը, — մոթալ փափախը գլխին քաշած մի գյուղացի դիմում էր շարված ատամով մի յերիտասարդի: Վերջինս հեծել էր մի շահել աշխետ ձի:

— Գեռի, լեզուդ իր բունը քաշի, կտեսնենք ում ձին է քոստո, — պատասխանեց շարված ատամով յերիտասարդն ու ինքնազոհ ժպտաց:

Մրցակիցների պոչից քարշ ընկած, Արան իր ձիուն խթանեց: Հելլադան թռավ բոլորից՝ առաջ:

— Ֆինիշ, տղերք, յերեխան հաղթեց, հա, հա, հա, — կատակախոսեցին այս ու այն կողմից:

Արան պաշարված էր անորոշ տրամությամբ: Հելլադան Սուրբ Ավոյի հովիկից մինչև այստեղ քայլել էր: Արդյոք նա չէր հոգնել: Հետո այստեղ այնպես լավ ձիեր կան...

Բայց հուզմունքը սրտում լեռնանում էր: Այլևս մտածել անկարող էր:

Մեծ սարը շրջելով, մրցակիցները պետք է հակառակ կողմից մուտք գործելին շրջանային կենտրոնը: Նրանք պարտավոր էին յերկու անգամ ասֆալտած խճուղին շրջել:

Արեն արդեն մոտենում էր գենիթին:

Հեծյալներն անսկասելիորեն ձիերի վազքն արագացնում էին, աչքերի պոչով միմյանց չափչփում:

Ձիերն էլ կարծես զգում էին, վոր հետոհետև մոտենում է վճռական բոպեն: Նրանք անհանգիստ փնչացնում էին, սանձերը քաշկատում:

— Ե՛յ, պստիկ, մի վազիր, յետ կմնաս, — Արայի յետևից ձայնեց մոթալ փափախով գյուղացին: Նա հեծել էր մի հաղթանդամ դամբիկ:

Արդեն մոտենում էին քաղաքին:

Ձիավորներն աշխուժացան: Միանգամից մտրակները շրմփացին: Բոլորովին անսպասելի կերպով Արան Հելլադային խթանեց: Ասուպի արագությամբ նժուլդը թռավ:

— Յյնւ, յերեխան թռավ:

— Քշեք, տղերք, — վորտացին մի քանի ձայներ:

Կտորած ատամով յերիտասարդն իր ձին ասպանդակեց: Վերջինս խրխնջաց ու թռավ: Նա Հելլադայից առաջ անցավ:

— Վան — զայրացավ Արան ու շնջաց — Հելլադան, ազիզ, թեւովորվիր:

Նժույզը ցայտուն ուռնգերը լայն բացեց: Ձին լիաթոր ծծեց թարմ ողն ու կողերին զգաց ասպանդակների զարկերը: Նա պարանոցին կամարի ձև տվեց, սլացավ:

Ջարդված ատամով յերիտասարդի աշխեա նժույզի վտանքը խճճվեցին իրար: Ձին յերերաց, կանգ առավ, յետ-յետ գնաց: Մինչ այս, մինչ այն, Հելլադան առաջ սլացավ:

Քամին նրա մազերը փուցնում էր, շնկշնկում ականջների մեջ:

Հաճուլքից Արան փորձում էր մի ակնթարթում կլանել արևի բոլոր ճառագայթները:

— Ամոթ ե, տղերք, յերեխան հաղթեց, թուեք, — ձայն տվեց մի շահել գյուղացի:

Մի պահ, և ձիավորները Հելլադային յետ կը թողնեյին, արդեն հասել էյին նրան: Արայի կողքից սլանում էր մոթալ փափախով ձիավորը: Նա ողում մտրակը ծածանեց: Անզգուշությունից հարվածը շրմփաց Հելլադայի ազդերին: Նժույզը փրփրեց, գլուխը կռացրեց, պարանոցին կամարի ձև տվեց, թռավ:

Ճանապարհը բոլորովին դատարկ էր: Նրա յեզերին շարվել էյին մի քանի դրոշակավոր պահնորդներ:

Ճանապարհի լայնքով քաշված էյին թզաչափ լայնությամբ սպիտակ գծեր: Անզգացացած ճանապարհը ձիերի դոփյունից զարթնեց: Նրան կից հարթավայրում աղմուկը հետզհետե աճում էր: Ուռիների ճյուղերին թառած պա-



տանիններն ու մանուկները քանի գնում, սուլոցներն ու ժեղագնում էյին: Նվագախումբը նվագում էր:

Վերջապես, ահա արշավախումբը:

— Թռիր, — ճչաց Արան:

Կրակ կարած Հելլադան առաջին բարյերից ամենից առաջ թռավ:

Ծափեր, ականջ ծակող սուլոցներ, ձիերի խրխինջ ու դոփյուն, հարայ-հրոց, մտրակների շառաչյուն:

— Եյ, Արան, ջանիկս, ծիծեռնակ, աղիզ, անուշիկս, ամոթով չմնաս, քողցր բալիկս, — բղավում էր Տիտոս պապը, թափահարում ձեռնափայտն ու վեր-վեր թռչում:

Ամբոխը շրջափակել էր դատավորի սեղանը:

Ծ... գյուղակի կոլտնտեսականները խմբվել էլին առանձին: Մի հանգամանք նրանց թվում էր շատ հանելուկային: Արան Բնչպես է Հելլադային ձեռք բերել:

Հանկարծ թնդաց ձիերի դոփյունը: Հանդիսատեսներից շատերն արդեն գուշակում էյին, թե մրցակիցներից վորը կհաղթանակի:

Մանուկներն ու պատանիները, վոր մինչ այդ խոսում էյին ձիերի լավ ու վատի մասին, վեճը կտրեցին, սկսեցին սուլել ու աղմկել:

Արշավախմբի առաջից թռչում էյին յերեք ձիավոր: Չախ կողմից շարված ատամով յերիտասարդն էր, աջ կողմից մոթալ փափախով գյուղացին, խակ մեջտեղից, նրանցից յերկու քայլ առաջ՝ Արան:

Հելլադան վորից գլուխ շուր էր դարձել, խակ մեծ-մեծ աչքերը ցլում էյին: Նա թռչում էր ու թռչում:

Կտրելու ճանապարհը մնացել էր հաղիվ յերեք հարյուր մետր: Տամներկու մարդկային ու նույնքան կենդանական սիրտ բաբախում էյին ծանր ու անհամաչափ:

Հանկարծ մտրակները մեկնն թռան վեր: Բացի Արայի մտրակից:

Վճռական հարվածներ:

Հելլադան ճարպիկ ձիավորին շատ լավ էր հասկանում: Նա զգաց, թե Բնչպես Արան փաղաքուշով էր բաշը շոյեց:

— Հելլադան, պայծառիկս, ախր հավաքիր, ուժերդ, մի քիչ, շատ քիչ, դե, դե... դե, թռիր, ջանս, թռիր սիրունիկս, դե, դե...

Ձիու առյուս կաշու մեջ ձգված շիկերի ցանցի տակ նշմարվում էլին ուռուցիկ մկանները: Հանկարծ նրանք թրթռացին, ապա կծկվեցին ու ձիգ յեկան: Ձին մի արտասովոր շերմությունից սարսուեց: Նա փռնչաց, բաշը թափահարեց: Իսկ հետո... Հելլադան վրտեղ էր... մրցակիցները մնացին հեռու-հեռու...

— Եհեյ, — ցնծությունից խեղդվում ու գոչում էր Արան:

Յերկրորդ և վճռական հաղթանակ: Առաջին բարյերից ամենից առաջ նորից Հելլադան թռավ: Նրան հետևեց շարված ատամով յերիտասարդի ձին, մոթալ փափախով գյուղացու գամբիկը, հետո բոլոր ձիերը:

Ամբոխն ալիք-ալիք շարվեց:

Առաջավորներին ամբոխը շրջափակեց: Նրանց շառագունած դեմքերից քրտինքը հոսում էր: Վոմանք թաշկինակներով ճակատների քրտինքը մաքրում էյին: Լավում էյին ծանր հեղուկներ:

Արան խիստ շառագունել էր: Քրտինքի առուն պարանոցի վրայից դանդաղ գալարվում էր:

Կռիվ է: Կռիվը սաստկանում է,

Մարտկոցն է վորոտում,

Թշնամին նահանջում է,

Մենք առաջ ենք շարվում:

Հանդարտ լերդուս եր Արան:

Հանկարծ անհարմար զգաց, ձայնը մեկեն կարեց:

— Դե, դե, շարունակիր, սատանա — կանչեց հարևան գյուղացին:

Յերեվաց Տիտոս պապը:

— Այ, կեցցես, ախարը տղա. — բարակ ձայնով ասաց նա, և շրթունքները չպպացրեց Արայի ճակատին:

Հետո բազմությունը շրջափակեց նրան: Մի ծաղկատար, մաղոտ դեմքով մարդ կպավ նրա ոձիքից:

— Այդպես, լավիկ տղա, ուրեմն ձին դու յես խնամել: Ապրես, արժանի յես սիրունիկ շքանշանի...

Ծ... գյուղակի կուտնտեսակալները ծաղկատարի ձեռքից Արային ազատեցին:

— Եդ վոնց, ազիզ ջան, ախր են շան վորդին ձին թոցրել եր. — մեկեն վրա տվին նրանք:

Խնդրեցին ամեն ինչ պատմել:

— Պատմությունը լերկար ե, տարի կքաշի, — առարկեց Արան:

Ի վերջո Տիտոս պապի քաղցրիկ լեզուն բանը հարթեց: Արան հանդարտ ձայնով սկսեց պատմել:

Հետաքրքրվողների բազմությունը խտացավ: Յետեվում խմբավաճները սարսափելի ջանքեր էյին թափում, աշխատում էյին Արայի խոսքերը վորսալ:

— Բերում են, բերում... — հանկարծ բղավեցին յերեխաները:

Ճանապարհով կենտրոն էյին մանուկ չորս հեծյալ միլիցիոներներ: Նրանք շրջապատել էյին Շավասպին և ընկերոջը:

Ավազակների զենքերը կախված էյին նրանց ձիերի թամբերից:

Ամենից վերջում քայլում եր մի սպիտակ ձի: Այդ

նախկին ոտամիսարի յերիվարն եր, հեծել եր Ծ... գյուղակից մի պատանի:

— Լազո ջան, թալակդ շնորհավոր, բերդի մեջ բարով-խերով մաշվեա — կատակեց մի յերիտասարդ:

Քրքիջ բարձրացավ:

Մի պառավ կին նրանց շանչեց: Նա շրջործկոմի քարտուղարի մայրն եր: Նրա վորդուն Շավասպն ու ընկերը դարանից սպանեցին: Դեպքը պատահեց ութ ամիս առաջ:

— Վայ, ձեր դար ու փոսը տեսնեմ, դժոխքի շներ, են ազիզ բալիս արլունով ձեր աչքերը քոռանան, վայ, աստուկը կրակով խորովվեք, մուրագներդ փուշ դառնա...

Կալանավորներն անհետացան:

Պառավն առաջացավ դեպի Արան:

— Զահել-չիվան, շարմաղ մազերիդ մառադ, ես շների թալակը դու սարքեցիր, թուշդ պաչեմ — ասաց քարտուղարի մայրը:

Նա Արային վորջազուրեց, ճակատը ծածկեց համբույրներով:

— Ե՛յ, ժողովուրդ, սիրունիկ, ջահել ազերք, ոգնեցեք ինձ, թոցրեք քաջիս — գոչեց պառավը:

Բարձրացավ ազմուկ և իրարանցում:

— Թոցրեք...

— Տուր ինձ...

— Հոս, հա...

— Շմավոն, տո՛ւր...

— Քաղցրիկիս դեսը տվեք...

— Եդ անուշին մի պաչ տվեք...

— Դե-սը...

— Ուռում...

Նվազախումբն սկսեց նվազել...

Հանկարծ մի շուն կլանչեց: Ամբոթի ալիքվող զանգ-

վածը ճեղքվեց: Քիչ հետո նա կանգ առավ, պայծառ աչքերով նայեց տիրոջը: Կենդանին ծառայով չետեվի թաթերին, դունչը պարզեց վեր, յերկար ու ձիգ հաշեց: Տիրոն եր:

Միջոցին բոցավառվում եր: Յերկնակամարում փշրվում եր արևի սկավառակը: Ամբոխը ծփում եր ու գոչում:

— Ուռռա...

— Ուռռա...

— Ուռռա...

Դրանից հետո սկսվեց բերքի տոնը, միտինգը, հասարակական զբոսանքն ու զվարճությունը...



Գրա. խմբագիր՝ Հ. Հայրապետյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Գասպարյան
Պրեպրեր՝ Հ. Մանուկյան

Գրավիտի լիտոյր՝ Վ. 2049. Հրատ. 4631.

Գառիեր 458. Տիրած 3000.

Թուղթ 62x94. Տպագր. 1 3/4 մամ.

Մեկ մամ. 24.480 սչան.


Հանձնված է արտադրության 10 մայիսի 1939 թ.

Ստորագրված է տպագրության համար 27 ապրիլի 1939 թ.


Պետրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

Faint, illegible text at the top of the left page, possibly bleed-through from the reverse side.

Second block of faint, illegible text on the left page.



Third block of faint, illegible text at the bottom of the left page.



ՀՀ Ազգային գրադարան



NL0401096

11000

ԳԻՆԸ 70 ՎՄՄ.



Մ. ՄԱԼՒԱՍՅԱՆ
ԵԼԼԱԴԱ
ԳԻՅ Արմ. ՍՏՐ ԵՐԵՎԱՆ